ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 126-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 17 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 19-ը հոկտեմբերի 2026 թվականի թիվ 17 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 19-ը հոկտեմբերի 2026 թվականի թիվ 17 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

3. Արենի համայնքի ավագանու 16.01.2026 թվականիթիվ 002-ն որոշմամբ հաստատված 2026 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

4. Արենի համայնքի Արենի բնակավայրի մշակույթի տան շենքի առանձնացված սենյակը դաշնամուրի դասընթաց իրականացնելու համար Աննա Առաքելյանին տրամադրելուն համաձայնություն տալու մասին:

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ելփին բնակավայրի մանկապարտեզի շենքը և հողամասը «Արենի համայնքի Ելփին բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին:

6. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից մրցույթով վարձակալության իրավունքով հատկացնելու մասին:

7. Նախկին Խաչիկ համայնքի ավագանու 21 հունիսի 2017 թվականի թիվ 20 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

8. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքը ճանաչելու մասին:

9. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասերը և օրինականացված բնակելի նպատակային նշանակության շինությունները ուղղակի վաճառքով կառուցապատող քաղաքացիներին օտարելու մասին:

10. Արենի համայնքի ղեկավարի 2026 թվականի բյուջեի կատարման երրորդ եռամսյակի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին:

11. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,16755հա գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխանակության միջոցով օտարելու մասին:

12. Արենի համայնքի ավագանու 24 դեկտեմբերի 2024 թվականի թիվ 202-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

13. Տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐՋՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 127-Ա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, 17.06.2021 թվականի թիվ 987-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին մասի 4-րդ կետը և քաղաքացու դիմումը՝ Արենի համայնքի ավագանին

որոշում է.

Տալ համաձայնություն Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Խաչիկ Հակոբի Թադևոսյանի սեփականություն հանդիսացող 0.1 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-036-0112-0043, հողատեսքը՝ վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 128-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.01.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 16-ը հունվարի 2026 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2026 թվականի տարեկան բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումները՝

1. Արենի համայնքի 2026 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ եկամտատեսակում ավելացնել 57 288 400 ՀՀ դրամ և նշված գումարն ուղղել՝ սուբվենցիա ոռոգման ցանցի կառուցում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 5112/շենքերի և շինությունների շինարարություն/հոդվածին:

2. Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 1 բաժնի 01 խմբի 01 դասի 4269/հատուկ նպատակային այլ նյութեր/հոդվածից պակասեցնել 1 000 000 ՀՀ դրամ և ուղղել նույն ոլորտի 4822/այլ հարկեր/ հոդվածին 500 000 ՀՀ դրամ, 4823/պարտադիր վճարներ/ հոդվածին՝ 500 000 ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 129-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍԵՆՅԱԿԸ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի, և հիմք ընդունելով Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակչուհի Աննա Առաքելյանի դիմումը և ներկայացրած ծրագիրը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն Արենի համայնքի Արենի բնակավայրի մշակույթի տան առանձնացված սենյակը անվարձահատույց, 12 ամիս ժամկետով և շաբաթական 12 ժամ տևողությամբ, տրամադրել Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակչուհի Աննա Առաքելյանին՝ դաշնամուրի դասընթացներ կազմակերպելու և իրականացնելու նպատակով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ու Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 130-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ «ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌՎՏՐԱՆԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 685-րդ և 689-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին որոշում է.

Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ելփին բնակավայրի 1-ին փողոց 50 հասցեում գտնվող 0.19977 հա (ծածկագիր 10-020-0054-0004 գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը և նրա վրա առկա մանկապարտեզի շենքը և շինությունները (մանկապարտեզ՝ 983.7 քմ, ծածկ՝ 2 միավոր 80քմ, պարիսպ՝ 4 միավոր 35.7 քմ) անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Արենի համայնքի Ելփին բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին՝ նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 131-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածը, Արենի համայնքի ավագանին որոշում է.

1. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.3215 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-012-0156-0029, հողատեսքը՝ այլ) մրցույթով, 25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 30000 ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.15965 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-004-0150-0014, հողատեսքը՝ արոտավայր) մրցույթով, 25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 15000 ՀՀ դրամ:

3. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.52 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-004-0152-, հողատեսքը՝ այլ) մրցույթով, 25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 50000 ՀՀ դրամ:

4. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.25891 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-020-0117-, հողատեսքը՝ արոտավայր) մրցույթով, 25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 25000 ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐՋՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 132-Ա

ՆԱԽԿԻՆ ԽԱՉԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21 ՀՈՒՆԻՍԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 20 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով. րենի համայնքի ավագանին որոշում է՝

Ուժը կորցրած ճանաչել նախկին Խաչիկ համայնքի ավագանու 21 հունիսի 2017 թվականի «Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության մասին» թիվ 20 որոշումը և անվավեր ճանաչել որոշման հիմքով 07.09.2018 թվականին կնքված թիվ 1729 գույքի նվիրատվության պայմանագիրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 133-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԻՇԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29-ը ապրիլի 2021 թվականի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» թիվ 698-Ն որոշմամբ սահմանված կարգի հավելված 1-ի 3-րդ և 5-րդ կետերը, ՀԲՍՀ 13 ապրիլի 1991թ. թիվ 03 որոշման քաղվածքը և Նորիկ Սարգսյանի Դիմումը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն Կադաստրային քարտեզում հողամասերի սեփականության սուբյեկտի սխալների ուղղումներին և Ճանաչել Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի բնակիչներ Նորիկ Մարգարի Սարգսյանի և Նաիրա Խաչատուրի Սարգսյանի սեփականության իրավունքը գյուղատնտեսական նշանակության 0.25574հա (կադաստրային ծածկագիր 10-017-0251-) և 0.94964 հա (կադաստրային ծածկագիր 10-017-0251-) խոտհարքերի նկատմամբ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 134-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի 16-րդ փողոց թիվ 7/6 հասցեում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,00323հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0041-0046, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) և հողամասի վրա օրինականացված բնակելի նպատակային նշանակության մառանը՝ 24,8 քմ ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով, օտարել կառուցապատող Աշոտ Արմենակի Ծատուրյանին:

1.1 Հաստատել հողամասի և շինությունների համար հաշվարկված գումարները.

1) 0.00323հա բնակավայրերի նշանակության հողամասի արժեքը՝ 39 438 (երեսունինը հազար չորս հարյուր երեսունութ) ՀՀ դրամ,

2) 1ք.մ.՝ 2418 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված 24,8 քմ տնտեսական նշանակության շինության համար՝ ընդամենը 59 966 (հիսունինը հազար իննը հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ:

Ընդամենը՝ 99 404 ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի 16-րդ փողոց թիվ 7/3 հասցեում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող

0,00644հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0041-0047, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) և հողամասի վրա օրինականացված բնակելի նպատակային նշանակության մառանը՝ 25,9քմ ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով, օտարել կառուցապատող Աշոտ Արմենակի Ծատուրյանին.

2.1 Հաստատել հողամասի և շինությունների համար հաշվարկված գումարները.

1) 0.00644հա բնակավայրերի նշանակության հողամասի արժեքը՝ 78 632 (յոթանասունութ հազար վեց հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ,

2) 1ք.մ.՝ 2418 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված 25.9 քմ տնտեսական նշանակության շինության համար՝ ընդամենը 62 626 (վաթսուներկու հազար վեց հարյուր քսանվեց) ՀՀ դրամ:

Ընդամենը՝ 141 258 ՀՀ դրամ:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի 16-րդ փողոց թիվ 7/4 հասցեում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,00385հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0041-0049, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) և հողամասի վրա օրինականացված բնակելի նպատակային նշանակության մառանը՝ 25,4քմ ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով, օտարել կառուցապատող Սիրանուշ Ստեփանի Կարապետյանին:

3.1 Հաստատել հողամասի և շինությունների համար հաշվարկված գումարները.

1) 0.00385հա բնակավայրերի նշանակության հողամասի արժեքը՝ 47 008 (քառասունյոթ հազար ութ) ՀՀ դրամ:

2) 1ք.մ.՝ 2418 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված 25.4 քմ տնտեսական նշանակության շինության համար՝ ընդամենը 61 417 (վաթսունմեկ հազար չորս հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ

Ընդամենը՝ 108 425 ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 135-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի ղեկավարի բյուջեի կատարման 2026 թվականի երրորդ եռամսյակի հաշվետվությունը ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐՋՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված Արենի համայնքի ավագանու
19.10.2026թ.-ի թիվ 135-Ա որոշման

2026թ. 9 ամիս

Եկամտային մաս. հազար դրամ

Եկամտատեսակ	Նախատեսված	Կատարողական	Կատարման տոկոս
Անշարժ գույքի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	20423,5	22088,6	108,2
Հողի վարձավճար համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	27734,4	15987,6	57,6
Գույքահարկ	35717,0	37868,6	106,0
Տեղական տուրքեր	3992,3	9591,2	240,2
Գույքի վարձակալությունից եկամուտներ	1259,0	2359,2	187,4
Աղբահանության, խմելու ջրի և ոռոգման ջրի վճարներ	18367,0	14571,6	79,3
Արտադպրոցական դաստիարակություն	2310,0	2049,0	88,7
Այլ եկամուտներ/օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/	9300,0	5814,4	62,5
Ընդամենը սեփական եկամուտներ	**119103,2**	**110330,1**	**92,6**
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	396678,6	396678,6	100,0
Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ/սուբվենցիաներ/	1019,2	1331,6	130,7
Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից /սուբվենցիաներ/	37468,6	37468,6	100,0
Ընդամենը եկամուտներ	**554269,6**	**545808,9**	**98,5**
Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր		9122,3	
ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ /Հողի օտարումից/ՄՈՒՏՔԵՐ	30000,0	11696,5	**39,0**

Ծախսային մաս	Նախատեսված	Կատարողական	Կատարման տոկոս
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	200000,0	165116,2	82,6
Պարգևատրումներ	250,0	227,3	90,9
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	1700,0	829,5	48,8
Էներգետիկ ծառայություններ	40000,0	32596,2	81,5
Կապի ծառայություններ	1500,0	880,4	58,7
Ապահովագրական ծախսեր	600,0	194,0	32,3
Պայմանագրային ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	60000,0	57506,8	95,8
Դրամաշնորհներ	30050,0	30025,1	99,9
Սուբսիդիաներ	180000,0	128916,2	71,6
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	2000,0	1305,0	65,3
Այլ ծախսեր	25000,0	19399,7	77,6
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն	130000,0	117847,1	90,7
Նախագծահետազոտական ծախսեր	9000,0	8095,3	89,9
Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ	2200,0	2171,7	98,7
Ընդամենը	**682300,0**	**565110,5**	**82,8**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 136-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,16755ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 4-րդ կետը, 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0.16755 հա (հասցեն ՀՀ ՎՁՄ Արենի, գյուղ Արենի, կադաստրային ծածկագիրը՝ 10-008-0184-0131, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասը փոխանակության միջոցով օտարել Դավիթ Վահեի Գասպարյանին՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.1676 հա (հասցեն ՀՀ ՎՁՄ Արենի, գյուղ Արենի, կադաստրային ծածկագիրը՝ 10-008-0184-0124, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասի փոխարեն:

2. Սահմանել, որ փոխանակության ընթացքում առաջացած կադաստրային ծախսերը ենթակա են վճարման քաղաքացու կողմից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 137-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 202-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Արենի համայնքի ավագանու 24-ը դեկտեմբերի 2024 թվականի «Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 164,64 քմ մակերեսով բնակելի տունը և սպասարկման համար անհրաժեշտ 0,00318 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը Խաչիկ բնակավայրի բնակիչ Արթուր Մանուկյանի ընտանիքին նվիրաբերելու մասին» թիվ 202-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1. Որոշման վերնագրում և որոշման բովանդակության մեջ «Նվիրաբերելու» և «Նվիրաբերել» բառերը համապատասխանաբար փոխարինել «նվիրելու» և «նվիրել» բառերով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 138-Ա

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը. Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0.0312 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-008-0111-0026) հողամասի վարձակալության և 0.0688 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-008-0111-0025) հողամասի կառուցապատման իրավունքով հատկացնելու մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված Արենի համայնքի Արենի բնակավայրում փաստացի բնակվող Մայրանուշ Սարգսյանին՝ համայնքի մատուցած ծառայությունների փոխհատուցման նկատմամբ սահմանել արտոնություն՝ զրոյական դրույքաչափի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐՋՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**